

16306

16307

16308

16309

16310

16311

16312

16313

891.99

7-89

(

Հրատարակութիւն Թիֆլ. Ընկ. Հայ. գրք. հրատ.

ԿԿ 891.71-3 № 46

Ա. ԱՆՆԵՆՍԿԱՅԱ

ԸՆՏԱՆԻՔԻ ՅՈՅՎԸ

Ոռւսերէնից Թարգմանեց

ՕՐ. Վ. ՏԵՐ-ՑՈՎԱՔՓԵԱՆ

—♦♦♦—

ԹԻՖԼԻՍ

Մ. Գ. ԱՕՏԻՒՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1892

3606

ԸՆՏԱՆԻՔԻ ՑՈՅՑՈՒ

Պետերբուրգցի աստիճանառոր Յովհաննէս
Սմիրնօլի չքաւոր ընտանիքի անդամները ժողո-
վուել էին փոքրիկ, անշուք կահաւորուած սե-
նեակում, որ միաժամանակ թէ ննջարան էր և
թէ մանկանոց:

Տասն և երկու տարեկան աղջիկը օգուտ
քաղելով յուլիսի պայծառ վերջալուսից, պա-
տուհանի մօտ նստած, խորին ուշազրութեամբ
գիրք էր կարդում:

Ուժժ տարեկան տղան սեղանի վրայ դար-
սում էր իւր՝ թղթից շինած տարօրինակ ձևերը,
որոնք նորա խաղի մէջ զինուորների դեր էին
կատարում:

Միւս երկու փոքրիկ տղաները աթուների
ոտները փաթաթել էին չուաններով և անդա-
դար մտրակում էին իրենց երևակայական ձիա-
ներին: Խսկ մայրը ձեռքի վրայ օրօրում էր իւր
կրասեր, երեք ամսական աղջկան:

2883.57

Дозв. ценз. Тифлисъ, 24-го декабря 1891 г.

Типогр. М. Д. Ротиніанца. Гол. пр., № 41.

— Վերջապէս երեխան քննեց թէ չէ, — հարց-
րեց Յովհաննէսը իւր կնոջը, ներս մտնելով
կից սենեալից, — քեզ հետ խօսելու բան ունիմ:
— Այս, նա քննած է, ևս խսկոյն քեզ մօտ
կը գտամ:

Նա զգուշութեամբ պառկացրեց երեխային,
սենեակի յետուի անսկիւնում դտնուող մահճա-
կալի վրայ, և վերցնելով սեղանի վրացից երե-
խացի մաշուած գուլպան, նստեց պատուհանի
մօտ և սկսեց կարկատել:

— Ֆլէգոնուը իւր գրադրին արձակել է պաշ-
տօնից, ասաց Յովհաննէսը, ակնսելով որ կինը պատ-
րաստ է իրեն լսելու. այդ պաշտօնը նա ինձ է ա-
ռաջարկում: Օրական մէկ-երկու ժամ պէտք է
պարագեմ, և այն էլ միմիայն երեկոները. գրա-
համար նա ինձ տալիս է տարեկան 100 ր. վար-
ձատրութիւն:

— Հարիւր մանէթը քիչ փող չէ, նամանաշ-
ւանդ մեր այժմեան հանդամանքներում, ասաց
Եղիսաբէթը մտախոհ, բայց արդեօք այդ աշ-
խատանքը ծանր չի լինիլ քեզ համար: Գոււ,
առանց այն էլ, ամբողջ ձմեռ հիւանդ էիր,
և բժիշկն ասում էր, որ դու աւելի քիչ պէտք
է զբաղուես:

— Ի՞նչ արած, — ախ քաշեց Յովհաննէսը, —
կաշխատեմ քանի որ ոյժերս կը ներեն, չէ որ

հարկաւոր է սրանց մասին մտածել, շարունա-
կեց նա, մատնացոյց լինելով երեխաների վրայ:
Ահա Մարիսամի 12 տարին լրացաւ, 13-ի
մէջն է, ծխական դպրոցի դասընթացն արդէն
վերջացրելու է. այդ գումարով կարելի կը լինէր
գիմնազիա տալ նրան:

— Դու ուղում ես զրան գիմնազիա տալ,
զարմանալով ասաց Եղիսաբէթը: Ի՞նչեր ես մտա-
ծել. իսկ ես յոյս ունէի, որ նա իւր ուսումն
աւարտելուց յետոյ տանը կը մնայ և ինձ կօգնի:
Ինձ համար շատ ծանր է մենակ՝ թէ երեխա-
ների մասին հոգալ, թէ կարել և թէ ամեն-
քիդ լուացքն անել:

— Գիտեմ որ հեշտ չէ, բայց չէ որ աղջիկը
մեղք է. նա շատ ընդունակ և աշխատասէր է
ուսման մէջ: Մէր աղջիկը ուսումնարանի զարդն
է համարում: Տանն ի՞նչ պիտի շինի: Կար անի
և երեխաներին օրօրի: Այդ բոլորը նա արդէն
այժմն էլ գիտէ: Իսկ եթէ մենք միջոց տանք
նրան գիմնազիան աւարտելու, նա, ինչու մի
կրթուած օրիորդ, կապահովի իւր ապագան,
միշտ կարող է մի կտոր հաց դտնել, և մեզ էլ
նեցուկ կը լինի մեր ծերութեան օրերում: Մա-
րիսամ, ուղում ես. գիմնազիա մանել:

Աղջիկն այն աստիճան զբաղուած էր, որ
չէր լսել ծնողների խօսակցութիւնը, այդ պատ-

ճառով և հօր հարցումը լսելով, նա արագ բարձրացրեց զլուխը և նրա աչերը փայլեցին ուրախութիւնից:

—Գիմնազիան, ինչու չը պէտք է ուզենամ; բացադանչեց աղջիկը, բայց միթէ այդ հնարաւոր է:

—Ուսումից գեռ չես ձանձրացել. երեխ ուզում ես ուսեալ օրիորդ դառնալ:

—Ի հարկէ ուզում եմ, և այն էլ լինալէս: Ձէ որ ձեզ համար էլ լսու կը լինի, եթէ ուսումս աւարտեմ զիմնազիայում: Յիշում էք — մօրաքոյրս պատմում էր իւր ծանօթ մի օրիորդի մասին, որ ուսել էր զիմնազիայում. այժմն նա մասեր է տալիս և ամսական ստանում է 60 ր.: Ես նոյնպէս դասեր կը տայի և աշխատած գումարն ամբողջապէս ձեզ կը յանձնէի. բացի դրանից կարող էի պարապել քրոջս և եղբայրներիս հետ, զրանով ազատած կը լինէի ձեզ՝ նրանց ուսման թոշակը վճարելուց:

—Տես, Լիզա, որքան բաներ է խոստանում, ժպտալով նկատեց Յովհաննէսը, ի՞նչ կամ սես, կարելի՞ է արդիօք հաւատալ Մարիամի խօսքերին. զուցէ և իրաւ մեզ երկու պատաւներիս կը մուտանանք:

—Գիտես, Մարիամ, հայրդ ի՞նչ է ուզում անել քեզ համար, դիմեց Եղիսաբէթը իւր աղ-

ջկան: Նա ուզում է դարձեալ մի նոր գործ յանձն առնել, որ քո ուսման թոշակը կարողանայ վճարել:

Մարիամը փաթաթուեց հօր վզովը, յուզմունքից նա ոչ մի խօսք չը կարողացաւ արտասանել: Բայց ծնողները, տեսնելով իւրեանց աղջկայ աչքերում փայլող արտասուքի կաթիւները և դէպի հօրն ուղղած քնքուշ փայփայնքը, համոզուեցին, որ գոնէ այդ բուեին անկարելի է կասկածել իրենց աղջկայ շնորհակալութեան զգացմունքի և բարի նպատակների վերաբերմամբ:

Յովհաննէսը յանձն առաւ իրեն առաջարկուած նոր գործը, և նա երեկոները ստիպուած էր պարապել զանազան թղթերի ձանձրալի արտադրութեամբ, փոխաննակ այդ ժամերը իրեն ընտանիքին շրջանում անցկացնելու և օրական ծանր աշխատանքից հանգստանալու:

Մարիամն ամբողջ օրերով պարապում էր, պատրաստուելով քննութիւնների համար, իսկ Եղիսաբէթը ստիպուած էր միացնակ կատարել անույին բոլոր գործերը. նա պէտք է թէ փոքրիկին օրօրէր, թէ մեծերին խնամէր և թէ կարէր ամբողջ ընտանիքի համար, թէ երեխաների լուացքն անէր և թէ ճաշ պատրաստելիս

պառաւ խոհարարուհուն օդնէր։ Նա չէր գանց գատում, բայց և այնպէս երբեմն ասում էր ամուսնուն. — Մեր Մարիամը շատ է պարապում, բայց արդեօք նա մի բան կը գառնայ թէ ոչ։ Նա ծանրութիւն է պատճառում մեզ. դու այս մի քանի օրը կարծես աւելի ես նիհարել։

— Ե՛, բաւական է, այդ մի ասիր աղջկաս, պատասխաննեց Յովհաննէսը. թող սովորէ, չը պէտք է խանգարել նրան։

Մարիամը բաւարար քննութիւն տուեց և մտաւ զիմնաղիայի 4-րդ դասարանը։ Նա այնքան ուրախ և գոհ վերադառնուած տուն, այնպիսի եռանդով մտածում էր իւր զիմնաղիական պարապուհքների և ապագայում իւր ընտանիքի օգտին անելիք աշխատանքի մասին, որ Եղիսաբէթի դէմքը փայլեց և նա բոլորովին չէր կասկածում, որ իւր աղջիկն առագայում մի կը թուած և ուսեալ օրիորդ կը գառնայ։

Մի բան միայն նրան անհանգստացնում էր. Մարիամը սկսում էր շատ մտածել իւր զգեստի մասին։

— Մայրիկ, ասաց աղջիկը, քննութեան միւս առաւօտը, ի՞նչ պիտի հագնեմ զիմնաղիա գնալիս. մի՞թէ առաջուայ պէս այս չթէ զգեստով պիտի գնամ ուսումնարան, չէ՞ որ կարելի չէ այդ։

— Ի՞նչ արած, հոգիս, պատասխաննեց Եղի-

սարեկթը, 5 ր. ունէի խնայած քեզ համար շալէ զգեստ գնելու, բայց երբ մեր փոքրիկ Հեղինէն հիւանդացաւ, հարկադրուեցայ բոլորը տալ բժշկի և գեղի։ Առժամանակ չթէ զգեստով էլ ման կը գաս։

— Զէ՞ որ ամօթ է, մայրիկ։

— Խնչու է ամօթ. զիմնաղիայի բոլոր աշակերտուհիները հօ հարուստ չեն, նոցա մէջ էլ չքաւորներ կան. վերջապէս հարուստները հօ պմնուելու համար չեն յաճախում ուսումնարանն Ով ուսումով է զբաղուած, նրա մոքովն անգամ չի անցնիլ, նայելու թէ ուրիշներն ինչպէս են հագնուած։

«Իրաւ, գուցէ զիմնաղիայում ուշադրութիւն չեն գարձնում շորերի վրայ», — մտածեց Մարիամը. մօր խելացի խօսքերը հանգստացրին նրան։

Եղիսաբէթն իւր ձեռքով այնպէս լուաց և կարգի բերեց նրա հին չթէ զգեստը, որ բոլորովին նոր էր երեւում. կարեց մի նոր գողնոց, պատրաստեց մաքուր օձիք և բազմաներ մա. այնպիսի վարպետութեամբ կարկասեց նրա կօշկի պատռուած տեղերը, որ բոլորովին մաշուածի նման չէին։

Մարիամը տեսնելով մօր հոգտառարութիւնը, զգացցուեցաւ։

Դասերի սկսուելու օրը նա ուրախ սրառվ և ամենալաւ զիտաւորութիւններով գնաց զիմնազիա: Եւ որովհետեւ առաջ էլ նա սովորում էր ուսումնարանում, այդ պատճառով չը շփոթուեց՝ տեսնելով իրեն շրջապատռած բազմաթիւ անծանօթ աղջիկներով:

Նա առաջուց զիտէր, որ աշակերտուհիները կը զիմնեն իրեն սովորական հարցերով՝ թէ ինչպէս է իւր ազգանունը, որուեղ է առաջ ուսել և այլն, և առանց ձանձրանալու նա մօտ 30 անդամ կրինեց միւնոյն պատասխանները:

Առաջին օրը նրան չաջողուեց մօտիկ ծանօթանալ իւր նոր ընկերուհիներից և ու մէկի հետ. իրեն պէս նորեկ աշակերտուհիները ամաչկոտ էին և սիրով չէին սկսում մի որևէ խօսակցութիւն. իսկ հին աշակերտուհիներն այնքան էլ չէին շտապում մտերմանալու նորեկների հետ: Չը նայելով այս բոլորին, Մարիամին ուսումնարանում ամեն բան գուր եկաւ՝ թէ լնգարձակ և լրւաւոր դասարանները, թէ դասամիջոցներին ամենայն շափ ու հասակի աշակերտուհիների ազմուկ հանող խմբերը, թէ դասարանական վարժուհիների քաղաքավարի վարժունքը և թէ ուսուցիչների դասառութիւնը: Նա տուն եկաւ ամենառարախ որամագրութեան տակ և պատմեց մանրամասնօրէն այն բոլորը,

ինչ որ տեսել և լսել էր զիմնազիայում: Ծնողները բաւականութեամբ լսում էին նրան, մինչև անգամ փոքրիկ երեխաները թողեցին իրենց խաղալիքները և աւելի մօտ նստեցին «զիմնազիստիա»-ին:

Մարիամը վերջացնելով իւր երկար պատմութիւնը, ասաց.—Յաւալին այն է, որ խիստ շատ զբքեր պէտք է գնել: Տեսէք, հայրիկ, որքան զիրք է հարկաւոր ինձ, ասաց նա, ցոյց սալով զբքերի ցուցակը. ես կարծեմ, որ դոքաշատ թանգ կ'արժենան:

— Այդ մասին մի՛ հոգար, սիրելիս, հանգլատացրեց նրան Յովհաննէսը: Նոր զբքերը, իրաւթանգ են, բայց ես հին զբքեր վաճառողեցքեղ համար գործածուած զբքեր կը գնեմ, չէ որ քեզ համար միւնոյն է:

— Ի հարկէ, միւնոյն է, թէ ինչպիսի զբքերով պէտք է սովորեմ, —արտասանեց Մարիամը՝ հառաջանքը թագցնելով:

Ճաշից յետոյ, անմիջապէս, Յովհաննէսը դրնաց զբքեր գնելու: Նա երկար շրջում էր մէկ հնավաճառից զէպի միւսը, մինչև որ ձիռք բերեց բոլոր հարկաւոր իրերը իւր սուղ միջոցներով: Նա յոդնած վերագարձաւ տուն և յանձնեց Մարիամին զբքերի մի մեծ կապօց:

Այդ գրքերը մեծ մասամբ շատ և շատ էին բանեցրած։ Երկում էր, որ այդ գրքերից ամեն մէկը շատերի ձեռքն էր ընկել և ամենքն էլ իւրաքանչիւրի վրայ թողել էին որևէ նշան։ մինը խծբել էր թանաքով, միւսը լուսանցքի վրայ զրով և մատիտով զանազան նկատողութիւններ էր արել, անտիպ թերթիկները զարդարել էր նկարներով, չորրորդն անթիւ անդամ վրան զրել էր իւր ազգանունը։ Մարիամը բաւականին սառը կերպով շնորհակալութիւն արեց հօրը և տրատում տեղաւորեց գրքերը իւր մեծ պայտասակի մէջ, որով նա զիմնազիա էր տանում իւր ուսման բոլոր պիտոյքները։

Յաջորդ օրը, առաւօտը վազ, զեռ զասերը չսկսած, նա արդէն դպրոցումն էր և ժամանակ չը կորցնելու համար կրկնում էր տրուած դասը։

—Այս ի՞նչ է, —յանկարծ դիմեց նրան՝ մօտը նստած աղջիկներից մինը. չ որ դու երէկ ասում էիր, որ ազգանունդ Սմիրնօվա է, իսկ աշխարհագրութեան դրքի վրայ դրած է Ռազդովսկայա, այդ գիրքը քո՞նը չ։

—Ո՞չ, իմն է, սաստիկ կարմիելով պատասխանեց Մարիամը։

—Իսկ նրա ոռւսերէն քերականութեան զըրքի վրայ գրուած է Ֆեդոտօվա, —վրայ բերեց

Մարիամի միւս զրացին։ Երկեխ դու անից տուն ման գալովքո ծանօթներից ես ժողովել այս գրքերը։ Եթէ Մարիամն աւելի խելօք լինէր, նա ուղղակի կը բացատրէր ընկերուհիներին բանի էութիւնը և աւանց դժուարութեամբ կը համոզէր նրանց, թէ որ աստիճան չիմար է նրանց ծաղրը, բայց զրա համար նա պէտք է ունենար աւելի համարձակութիւն և սրամութիւն։ Նա ամաչեց, շփոթուեց, որով աւելի ևս խրախուսեց ծաղրածուներին։

—Դու չես ամաչում, որ այդ տեսակ գրքերով ես ուսումնարան դալիս, բացագանչեց մի երրորդ աղջիկ՝ մօտենալով խօսակիցներին. տեսմէք, օրիորդներ, այս կեղտուա գիրքը, ասաց նա զգուանքով և վերցրեց սեղանի վրայից Մարիամի գրքերից մէկը և ցոյց տուեց ժողովուած ընկերուհիներին։ Այդ գիրքն իրաւ որ աչքի էր ընկնում իւր բազմաթիւ թանաքի և այլ ամեն տեսակ կեղտի բծերով։

—Աստուած իմ, ես երեք տարի սովորում եմ այստեղ և մի այսպիսի անմաքուր գիրք չունիմ, նկատեց օրիորդներից մինը։

—Ի՞նչպէս դու կարողացար այդ աստիճան կեղտուակել իրերդ։

—Այդ ամենեւին ես չեմ կեղտուակել, համարեա արտասուելով բացագանչեց Մարիամը։ Թո-

ղեք, խնդրեմ, իրերս հանգիստ. Ի՞նչ զործ ու-
նեք դրանց հետ:

Նա բարկացած խլեց կեղաստ զիբքն այն
աղջկաց ձեռքից և սկսեց շատավ-շտապ դարսել
իւր բոլոր իրերը պայտւասակի մէջ:

—Եթէ դու չես կեղտոտել զրքերը, ուրեմն
դոքա քոնը չեն, —չէին դադարում նկատել
աշակերտու հիները:

—Երեխ այդ զրքերը քեզ իրեւ ողորմու-
թիւն են տուել:

—Արդեօք տօնավաճառին ես գնել:
—Եթէ զրքերդ գնեցիր տօնավաճառին, կա-
րող էիր այնտեղ գնել և մի շալէ զգեստ:

—Չես ամաչում, որ այդ չթէ զգեստով ետ-
դալիս զիմնազիա, այն էլ այդպիսի կարճ զգես-
տով, —արհամարհանքով նկատեց մէջ աղջիկնե-
րից մինը:

Նոյն բուլէին ուսուցիչը ներս մտաւ դա-
ստան և խօսակցութիւնն ընդհատուեց:

Աղջիկները շատ շուտով մոռացան թէ Մա-
րիամի զրքերը և թէ իրենց արած չարամիտ
նկատողութիւնները: Բայց Մարիամը չէր կա-
րողանում մոռանալ ընկերուհիների ծաղրը: Նա
արդէն շատ աղքատութիւն էր քաշել և շատ
զրկանքներ կրել իւր կեանքում, բայց դեռ եր-
բէք աղքատութիւնը նրան այդափ անախորժ

չէր թուացել և այդափ ստորացնող, ինչպէս
այժմս: Նա առանձին հոգատարութեամբ պա-
հեց իւր իրերը սպայուսակի մէջ և չէր վստա-
հանում հանել այն, որպէս զի նորից չենթար-
կուի ընկերուհիների ծաղրին: Նա համեմա-
տում էր իւր զգեստը միւս աղջիկների զգեստ-
ների հետ և ամաչում էր իւր չթէ զգեստից,
ինչպէս մի վատ բանից: Նա կորցրեց իւր ըն-
կերուհիների հետ մտերմանալու ցանկութիւնը:
Ոմանք փորձեցին հետը խօսել, բայց նա այն-
պէս սառն և կարճ պատասխանեց, որ նրանք
այլ ևս չը կամեցան խօսակցութիւնը շարու-
նակել:

Այդ երեկոյ Սմիրնօվների ընտանիքում այլ
ևս չէր լսւում Մարիամի զուարձալի խօսակցու-
թիւնը: Նա չէր ուզում արտմեցնել ծնողներին,
յայսներով նրանց իւր անհաճոյ դրութիւնը, իսկ
ուրիշ կողմնակի նիւթերի մասին խօսելու սիրա-
չունէր: Պատճառ բերելով յաջորդ օրուայ դը-
ժուար դասերը, նստեց իւր զրքերով՝ մի ան-
կիւնում, փոքրիկ սեղանի մօտ և սկսեց պատ-
րաստել դասերը: Հայրն ու մայրը զբաղուած
էին իրենց գործերով, նրանք ժամանակ չունէին
հետեւելու իրենց աղջկան, եթէ ոչ կը զար-
մանալին, որ Մարիամը շատ օտարութիւնը է

վերաբերվում դէպի իւր զժուար դասերը։ Փոխանակ շուտով և աշխատափրութեամբ սովորելու, նա թերթում էր զրքերը, ուէտինով կամ դանակով մաքրում նրանց վրայ եղած բժերը, կազմերը սպիտակ թղթով փաթաթում և մի քանիսներից մինչեւ անգամ շատ կեղառութերթերը պատուաւ։ Իւր լնկերուհիների կծունկատողութիւնները լսելով՝ նա մտածում էր մշթէ դասերը լսւ սովորելու մասին, այլ թէ արգեօք ինչպէս ծածկէ իւր աղքատութիւնը և մի փոքր հարուստ ձևանաց։ Նա մի կերպ պատրաստեց յաջորդ օրուայ դասերը։ բայց դրա փոխարէն նրա զրքերը այժմ արտաքրուստ մաքրուր էին երեսում և բոլորովին չէին նմանվում տօնավաճառին գնուած զրքերի։

«Եթէ նա կարողանար փոխել և զգեստը։ իրաւ որ ինչ վաս զգեստ է։ Երէկ նոր լուացած և ութոյած լինելով էլի մի քանի նման էր, այսօր արդէն բոլորովին չարգուած է, իսկ վաղը ինչի՞ն նման կը լինի։ ԱՄիթէ ևս միշտ զթէ զգեստով պիտի ման դամ և ամենքն էլ ինձ վրայ պիտի ծիծաղեն։ Ոչ, մայրս ինձ համար անպատճառ մի կերպ շալէ զգեստ պէտք է կարէ. ևս չեմ ուզում ընկերուհիներիս ծաղրի առարկան լինել զիմնազիայում։ Այս

տխուր մտածմունքով Մարիամը բաւականին ուշ քննեց։

Յաջորդ առաւօտը երբ զարթեց, տեսաւ որ եղանակը շատ վատ էր. երկինքը պատած էր թանձր, մոխրագոյն ամպերով, մաղում էր բարակ անձրեւ։ Մարիամը տաք վերարկու չունէր։ Նա չորս տարի շարունակ հագնում էր միենոյն տաք՝ մահուդէ վերարկուն, որ այժմ այնքան կարճացել և նեղացել էր, որ նա այլ ևս չէր կարող հագնել, և նղիսաբէթը վճռեց դրանից՝ փոքրերի համար տաք զգեստներ կարել, իսկ Մարիամն նա տուեց իւր վերարկուն։ Բայց այդ վերարկուն պէտք էր ներկել տալ, որովհետեւ երկար գործածելուց նա բոլորովին գոյնը փոխել էր, բացի դրանից պէտք էր յարմարեցնել Մարիամի հասակին։

— Մայրիկ, վերարկուս դեռ պատրաստ չէ, հարցրեց Մարիամը վշտացած, պատուհանից դէպի դուրս նոյնելով։

— Չէ, հոգիս, պատրաստ չէ, հոգացողութեամբ պատասխանեց նղիսաբէթը։ Երկու անգամ զնացել եմ ներկարարի մօտ, նա խոսացաւ վաղուան համար անպատճառ պատրաստել։ Ճշմարիան ասած, չը գիտեմ ինչպէս պէտք է զնաս ուսումնարան։ Հազիր գոնէ իմ կարծ

վերնազգեստը, որ թէւ հին է, բայց ոչինչ, գոնէ չես թրջուիլ:

—Այս, մայրիկ, ես ամաչում եմ դրանով ուսումնարան գնալ. այդ անչափ շատ կարկատաններ ունի, և միւնոցն ժամանակ ինձ չէ յարմարում. թէւերը երկայն են, իսկ օձիքը լայն:

—Ի՞նչ արած, Մարիամիկ, դու գիտես որ մենք շատ ուրախ կը լինէինք, եթէ կարողանացինք քեզ լաւ հագցնել, մենք մեղաւոր չենք, որ մեր միջոցները չեն ներում: Այնու ամենայնիւ աւելի լաւ է հագնես զոնէ այս հին վերնազգեստը, քան թէ այս անձրևին ուսումնարան գնաս առանց վերարկուի:

Մարիամը զգում էր, որ մօր ասածը ճիշդէ: Նա խորը ախ քաշելով ծածկեց հին, իրեն չը յարմարուող վերնազգեստը և գնաց ուսումնարան, ցանկանալով որ ճանապարհին չը պատահի իւր ընկերուհիներից ոչ մէկին:

Նա գնում էր արագ քայլերով և շուտ-շուտ նայում էր այս ու այն կողմը. ահա նա մօտենում էր ուսումնարանին, դարձեալ մի քանի քայլ և նա արդէն այստեղ կը լինի: «Փառք Աստուծոյ, ոչ մի աշակերտուհի չի երևում, երեխ դեռ շատ վաղ է»: Նա մի փոքր աւելի սիրտ առնելով առաջ գնաց, —բայց աւաղ, հէնց

որ հասաւ ուսումնարանի դաներին, մայթի մօտ մի կառք կանգնեց, որից զուրս թռչելով երկու աղջիկ, վազեցին և հասան Մարիամին՝ սանդուղքի հէնց առաջին աստիճանների վրայ:

—Այս ով է, կանչեց նրանցից մինը, նամալով Մարիամի այլայլուած գէմքին:

—Սմիրնովա, այդ ի՞նչ ունիս հագիգ:

—Հանգիստ թող դրան, ընդհատեց միւս աղջիկը. —Երկի նա ինչպէս զբքերը, նոյնպէս և զգեստը ուրիշներից է վերցրել:

Եւ այդ երկու աղջիկներն էլ բարձրաձայն ծիծաղով վազեցին վերև, իսկ Մարիամը, զգալով իրեն անպատուած և վիրաւորուած, դանդաղ քայլերով հետևեց նրանց:

Եւ նրա ուսումնարանական կեանքի այս օրն էլ, ինչպէս և նախընթաց օրը, թունաւորուած էր: Նա դարձեալ խորշում էր ընկերուհիներից, վախենալով նոյն իսկ այն աղջիկների ծաղրից, որոնք առհասարակ անընդունակ էին ծաղրել մի մարդու՝ նրա աղքատութեան պատճառով. նա դարձեալ չէր կարողանում ուշադրութեամբ լսել ուսուցիչների սոււած դասերը, չէր կարողանում ազատուել այն ծանր մոքերից, որոնք յիշեցնում էին նրան իւր դըքաղդ դրութիւնը:

Հետևեալ օրերը միւնոյն բանը կրկնուեց։
Մարիամը իւր բնաւորութեամբ միշտ փառա-
սէր էր։ Յիմար աղջիկների ծաղրը ներդործում
էր Մարիամի վրայ աւելի, քան հարկաւոր էր։
Այն համոզմունքը, որ նա ուրիշներից աւելի
աղքատ է ու քվատո, և նոր վիրաւորանքների
երկիւղը — հանգիստ չէին թողնում նրան։ Եր-
բեմն նրա մաքովն անցնում էր՝ թողնել ու-
սումը, դադարել ուսումնարան յաճախելուց, եր-
բեմն երազում էր մի որ և է բանով զերազան-
ցել ընկերուհիներին և այդպիսով վրէժ առնել
ծաղրողներից։ բայց ամենից յաճախ նա մտա-
ծում էր, թէ ինչպէս անէ, որ հարուստ երե-
ւայ, որ աւելի զեղեցիկ հազնուի և ձեռք բերի
զանազան մանր զարդարանքներ, որոնցով հպար-
տանում էին ուրիշները։ Մարիամի դասարանի
աշակերտուհիները ամենքն էլ այնպէս թեթե-
ւամիտ և կոպիտ չէին, ինչպէս նրան վիրաւո-
րող ծաղրածուները։ Նրանցից շատերը աղքատ
ընտանիքներից լինելով, սովոր էին համոզրան-
քով վերաբերուել դէպի իրենց ընկերները, միւս-
ները ընտանեկան լաւ կրթութիւն ստանալով —
հասկանում էին, թէ որքան աններելի է ծաղ-
րել աղքատութիւնը, կային, վերջապէս, և
այնպիսիները, որոնք զբաղուած լինելով ուսու-
մով, ոչ ժամանակ և ոչ էլ սէր ունէին զբա-

զուելու իրենց ընկերուհիների զգեստներով և
արագինով։ Նրանք նկատեցին, որ Մարիամը
յիմար աղջիկ չէ, ծանօթացան և աշխատեցին
մօտենալ նրան։ Նրանց ընկերութեան մէջ Մա-
րիամը կարող էր լաւ ժամանակ անցկացնել,
բայց տարաբաղդաբար, դասարանում կային
հինգ-վեց հոգի, որոնք միշտ պատրաստ էին յի-
շեցնել Մարիամին իւր դրութիւնը։

— Ես համոզուած եմ, որ Սմիրնօվան ստում
է ասելով՝ որ իբր թէ իւր հայրը աստիճա-
նաւոր է, — խօսում էին աշակերտուհիների մի
խմբում, չը նկատելով որ ինքը Մարիամը մօ-
տիկ կանգնած է։ — Նա, երեխ, մի որ և է ար-
հետաւորի աղջիկ է, որ այդչափ աղքատ է։

— Ես կ'ընկերանացի Սմիրնօվացի հետ, որովհե-
տեւ ես նրան շատ եմ հաւանում, ասում էր մի աղ-
ջիկ իւր ընկերուհուն, միան մայրս ինձ թոյլ չի
տալիս վատ հագնուած երեխաների հետ ընկե-
րութիւն անել։ Նրանք անպիտան ձեւեր ունին։

— Օրիորդներ, բացագանցում էր չարաձճի-
ներից մինը, — նայեցէք, Սմիրնօվան այսօր ուրիշ
զգեստ է հագել, երեկուաց զգեստից աւելի կարճ,
և նա ծիծաղելով մատնացոյց արեց Մարիա-
մին, որ ուրիշ չթէ շոր էր հագել։ Մարիամը
կարմրում էր, ամաչում և զգում իրեն անսահ-
ման դժբաղը։

Մի անդամ թուաբանութեան ուսուցիչը կանչեց նրան գրառախտակի մօտ տուած խընդիրը վճռելու։ Մարիամը շատ լաւ հասկանում էր այդ ինդիրը. նա հեշտութեամբ առանց սխալի վճռեց տուած խնդիրը և հէնց որ ուզում էր բացատրել ուսուցին վճռելու եղանակը, յանկարծ նորա ուշադրութիւնը գրաւեց ընկերուհիների կամաց քշփչոցը և ծիծաղը։ Նա յետ նայեց և տեսաւ, որ առաջին նստարանի վրայ նստած երկու աշակերտուհիներն իրենց ընկերուհիների ուշադրութիւնը դարձնում էին Մարիամի ուների վրայ և կամաց ծիծաղում։ Մարիամը պլուխը քաշ զցեց և տեսաւ որ, աւազ, մօր ձեռքով շինած կարկատանը պատուել էր և մէկ կօշկի վրայ գոյացել մի ահագին պատուածք։ Խեղճ աղջիկը սասախկ ամաչեց։ Այն բոլորը, ինչ որ ուզում էր ուսուցին պատմել, մոռացաւ և վրդովուած՝ կաւիճը ձեռքին պատացնելով ոչ մի խօսք չէր գտնում ուսուցի հարցերին պատասխանելու, և մինչև անդամ հազիւ թէ լսում էր առաջարկուած հարցերը։

Ուսուցիչը, ի հարկէ, չը կարողացաւ հասկանալ նրա վրդովմունքի պատճառը և այդ վերադրեց նրա չը գիտենալուն։ — Օր. Ամիրնօվա, դուք, երեխ ինքներդ չէք հասկանում, թէ ինչ

էք գրել գրատախտակի վրայ, խիստ կերպով նկատեց նա։ — Նստեցէք տեղներդ և միւս անգամ աշխատուցէք ինքնուրոյն լինել, հասկացէք այն, ինչ որ անում էք։

Ուսուցչի այս խիստ յանդիմանութիւնը և ցուցակում նշանակուած վատ թուանշանն աւերմի ևս շփոթեցին խեղճ Մարիամին։ Նա վերադարձաւ տուն տիսուր, բարկացած, արտասուքը աշքերին, և հանդիպելով մօրը հէնց առաջին սենեակում, խակոյն սկսեց գանգատուել նրան և պատմել իւր անախորժ դրութիւնը։

— Ճշմարիտ, այս դրութեամբ դիմնազիա յանախեն անկարելի է, — ասում էր նա հեկեկալով։ — կարծես, ես մուրացկան լինիմ։ Տես, մայրիկ, կօշեկս ինչպէս է պատռուել։ այս կատարեալ խայտառակութիւն է։

— Ի՞նչ է պատահել, Մարիամիկ, — զարմացաւ Եղիսաբէթը, — կօշիկներդ պատռուել են, ինչ մէծ դժբաղդութիւն է այդ, նորերը կ'առնենք. և ինչ կայ այստեղ խայտառակ։ Կարծեմ, որ այդ ամենքին էլ պատահում է։

— Ե՛հ, միայն այս հօ չէ. տես ինչպէս եմ ես հագնուած, բացի ինձանից ոչ ոք ուսումնարան չէ գալիս չթէ զգեստով. ամենքը ծաղրում են ինձ։

— Միթէ իրաւ ծաղրում են, — արտամու-

թեամբ հարցրեց Եղիսաբէթը. — Տիծաղում են,
որ զու նրանցից աղքատ ես. լաւ կրթուած
օրիորդներ են, էլ չի ասուիլ:

— Ի հարկէ, նրանց կողմից յիմարութիւն է
այդ, բայց և այնպէս ինձ համար շատ անա-
խորժելի է, — դժգոհութեամբ ասաց Մարիամը
և քաշուելով դէպի մի անկիւն, շարունակեց
կամաց լալ:

Եղիսաբէթը վաղուց արդէն նկատել էր, որ
Մարիամը նեարդացին է դարձել, որ նա արհա-
մարհանքով է վերաբերում անային հանգամանք-
ներին և նստում է ընտանիքի շրջանում յօն-
քերը կիսած և ուռած: Աղջկայ այդ վաստ
տրամադրութիւնը նա վերագրում էր դասերով
չափազանց զբաղուելու անսովորութիւնից առա-
ջացած յոգնածութեան, և հարց ու փորձ չէր
անում նրան, այժմ նա հասկացու, թէ բանը
ինչումն է:

— Զէ՞ որ ես ուղիղ էի ասում, ախ քաշե-
լով ասաց նա. զու զիմնազիա չը պէտք է
մոնէիր. այդ մեզ համար չէ. ինչպէս կարող
ենք ուրիշներին հաւասարուել:

— Ո՞չ, մայրիկ, ես կարող եմ սովորել գիւմ-
նազիայում, — աղաղակեց Մարիամը, — միան մու-
րացկանի պէս չեմ կարող դնալ. չէ՞ որ ձեզնից

շատ բան չեմ պահանջում. մի՞թէ դուք յիրա-
ւի չէք կարող կարել ինձ համար գոնէ մի
կարգին զգեստ:

Մարիամը առաջին անգամն էր այսպէս խօ-
սում մօր հետ: Մինչև այժմ նա միշտ հասկա-
նում էր, թէ ծնողների համար ո՞քան ծանր է
իննամել այցպիսի մի մեծ ընտանիք: Եղիսա-
բէթը տրամութեամբ զգաց իւր աղջկայ վար-
մունքի այդ փոփոխութիւնը:

— Մարիամիկ, — վիրաւորուած ձայնով ասաց
նա, — կարծես ինքդ չես նկատում, թէ ինչպէս
ես ու հայրդ աւատօփց մինչև երեկոյ անդա-
դար աշխատում ենք և ոչ մի աւելորդ կոպէկ
թոյլ չենք ասլիս մեզ վրայ ծախսելու:

Մօր յանդիմանութիւնը ամաչեցրեց Մարիա-
մին, բայց նա զգալով իւր յանցանքն, աւելի ևս
սասափկ ախրեց: Եղիսաբէթն էլ նրանից աւելի
բազմար չէր. նա հասկանում էր, որ Մա-
րիամը փոքր ինչ ուրիշ կերպ կարող էր վերա-
բերուել ընկերուհիների ծաղրին, որ նա կարող
էր այդ առանց ուշագրութեան թողնել, որ նա
կարող էր բացարել աղջիկներին՝ թէ ոքան
անիրաւացի են նրանք. բայց Մարիամի հասա-
կում այդչափ խոհական լինելը դժուար էր
թուում նրան. նրա սիրութ սասափկ ցաւում էր
աղջկայ համար և իւր բոլոր ջանքը գործ էր

դնում մտածելու՝ թէ ինչպէս պէտք է օգնել
նրան: Նա մտախոհ դիտում էր իրենց երկու
սենեակի աղքատիկ կահաւորութիւնը, աշխա-
տում էր որոնել, թէ այդտեղ գտնուած իրերից
որը կարելի է ծախել և Մարիամի համար
զգեստ գնել. յետոյ նա մօտեցաւ ննջարանի
պատի մօտ դրուած մի հին եռոտանի պահա-
րանի, դուրս քաշեց կարգով իւրաքանչիւր
արկղը և մտածունքների մէջ ընկղմուած մէկ-
մէկ յետ դարսեց միջի իրերը: Յանկարծ նրա
աչքերը ուրախութիւնից փայլեցին:

— Դարդ մի' անիր, Մարիամիկ, — գիմեց նա
աղջկան ժպիտը երեսին, — գու կ'ունենաս նոր
զգեստ. ես բոլորովին մօտացել էի, որ գեռ պա-
հած ունիմ Հեղինէի կնքամօր ընծայած քա-
թանը. իսկոն կ'երթամ և կը ծախեմ այդ:

— Զէ որ գուք ասում էիք, թէ այդ քա-
թանը Հեղինէին հարկաւոր է, — անվստահ ձայ-
նով նկառեց Մարիամը:

— Ե՞ն, ինչ արած, մի կերպ կը յարմա-
րեցնենք:

Մարիամը զգում էր, որ մօրը Ճը պիտի
թոյլ տաչ վիրաւորել փոքրիկ քրոջը իւր պատ-
ճառով, բայց իւր ընկերուհիներից ոչ վասո
հագնուած դիմազիա գնալու փափագն այն-
չափ զօրեղ էր նրա մէջ, որ նա ընկնուեց

զրանից: Նա մի խօսքով անգամ յետ չը
պահեց Եղիսաբէթին, որ շտապում էր շուտ
ծախել տաչ քաթանը, և երբ մի ժամից յե-
տոյ նա վերագրածաւ տուն և յանձնեց քա-
թանի համար ստացած 8 ր., նա սաստիկ կար-
մրեց, բայց և այնպէս ուրախութեամբ ընդու-
նեց փողը: Երեք օրից յետոյ, Մարիամը դա-
սարան մտաւ շալէ — բազմաթիւ ծալքերով զար-
դարուած նոր զգեստով, որի կարելու համար
Եղիսաբէթն երկու դիշեր գրեթէ անքուն էր
անցկացրել: Մարիամի խիղճը տանջում էր, երբ
նա տեսաւ մօր յոգնած դէմքը և նրա անքնու-
թիւնից ուռած աչքերը, բայց և այնպէս նա
չէր զզջում իւր արարքը և ուրախանում էր,
որ ինչ զնով էլ որ լինէր, վերջապէս ազա-
տուած կը լինի ծաղրից:

Հասաւ աշունը: Անցեալ տարի Մարիամը
հանգիստ սրաով ծածկում էր իւր յարդեաց
գլխարկը, մինչև որ հասաւ մորթէ գդակ ծած-
կելու ժամանակը, իսկ այժմ նա կարծում էր,
որ այդ ամօթա է:

— Մացրիկ, արդեօք շնուր կը գնէր ինձ հա-
մար աշնանացին զլիսարկ, հարցրեց նա մի օր,
սեպտեմբեր աշնին, վերագառնալով ուսումնա-
րանից:

— ի՞նչ ես ասում Մարիամիկ, — բացագանցեց Եղիսաբէթը, — չէ որ ծննդեան տօներին դնեցի քեզ համար մորթէ գդակը, իսկ ամառանոր յարդեայ գլխարկը. ի՞նչ միջոցներով կարող ենք դնել քեզ համար տարէնը երեք գլխարկ. չէ որ մենակ դնւ չես. տես, եղբայրներդ գրեթէ անկօշիկ են ման գալիս, ես մտածում եմ, թէ նրանց կօշիկների համար մրտեղից կարող եմ պարոք վերցնել, իսկ դու նոր գլխարկ ես պահանջում:

— Ես չեմ կարող յարդեայ գլխարկով ուսումնարան գնալ, — փքուած արտասանեց Մարիամը:

— Ի՞նչո՞ւ չես կարող գլխարկներով հօ չէք նատած դասարանում:

— Ի հարկէ չէ. բայց չէ որ փողոցում էլ պատահում են աղջիկները. ես չեմ ուզում, որ ինձ մուրացկանի տեղ դնեն. աւելի լաւ է տանը կը նստեմ, մինչև սաստիկ ցրտերը կ'սկսուին և կարելի կը լինի մորթէ գդակ ծածկել:

Միւս օրը Մարիամը ուղիղ որ ուսումնարան չը գնաց, թէև այդ նրան շատ անախորժելի էր:

— Մարիամ, ինչի՞ այսօր զիմնազիս չես գնացել, — ճաշի ժամանակ հարցրեց Յովհաննէսը. և նա նոյն պատասխանը տուեց հօրը, ի՞նչ որ

ասել էր մօրը՝ թէ առանց նոր գլխարկի չի կարող զիմնազիս գնալ:

Յովհաննէսը մտածմունքի մէջ ընկղմու եցաւ: Ի՞նչ դժբաղութիւն, ասաց նա մտախոհ. ի՞նչ պէտք է անել:

— Արդեօք վոզ չունին, — զիմեց նա կնոջը. չէ որ երէկ ասում էիր՝ թէ պարաք պիտի վերցնես Միրօնօվացից:

— Երեխացոց կօշիկների համար եմ վերցրել պարոքը: Տան յատակը սառն է, երեխաները վազում են պատաւոտած կօշիկներով և հեշտ կարող են մրսել, — դժգոհութեամբ պատասխանեց Եղիսաբէթը:

Մարիամը չուզեց ինդրել մօրը, բայց այդ երեկոյ նա մի քանի անդամ զառնապէս լաց եղաւ. Յովհաննէսը տանջւում էր, տեսնելով իւր սիրելի աղջկայ արցունքը: Նա համոզուած էր, որ իւր կինը իրաւացի է, որ փոքրիկների համար կօշիկներն աւելի անհրաժեշտ են, քան թէ գլխարկը Մարիամի համար, բայց և այնպէս աղջկայ տիրութիւնն անտանելի էր նրա համար: Նա մի քանի անգամ խորհրդակցեց Եղիսաբէթի հետ և վերջապէս, երբ Մարիամն եկաւ բարի գիշեր մաղթելու իւր ծնողներին, հայրը նրա ականջին փափաց:

— Ուրախացիր, աղջիկս, մայրդ համաձայ-

նուեց, վազը առաւտօտ միասին կ'երթանք դրւ-
խարկ գնելու:

Մի օրից յետոյ Մարիամը գիմնազիա գնաց
նոր զիմարկով. իսկ նրա փոքրիկ եղբայրները
դեռ երեք շաբաթ շարունակ պէտք է ման
գային պատառուստած կօշիկներով։ Այս անդամ
նա արդէն գրեթէ չէր ամաչում իւր վատ վար-
մունքից։

«Ի՞նչ մի դժբաղդութիւն է, եթէ նրանք
բորիկ էլ ման գան, — մատածում էր նա, նայե-
լով եղբայրներին, — չէ՞ որ նրանց ոչ ոք չէ տես-
նում»։

Մի քանի օրից յետոյ, Մարիամին հարկա-
ւորուեց մի թամսկազին ֆրանսերէն գիրք, և
նա ուղղակի յայտնեց հօրը. — Այդ գիրքը գնե-
ցէք գրավաճառներից, հայրիկ. ինդրեմ հնա-
վաճառներից չառնէք։

Յովհաննէսը իւր բաճկոնը դրաւ դրեց, որ-
պէսզի աղջկայ ցանկութեանը բաւականու-
թիւն տայ: Մարիամն ընդունեց այդ հանգիստ
սրտով։

Մարիամի դասարանական վարժուհին ամուս-
նանալով՝ թողեց գիմնազիան։ Աշակերտուհի-
ները մտածեցին ի յիշատակ՝ նուիրել նրան մի-

ալբօմ իրենց լուսանկարներով։ Մարիամը, ա-
ռանց երկար մտածելու, մասնակցեց այդ նուի-
րատուութեանը, և իսկոցն խոսապցաւ ընկերու-
հիներին՝ հանել տալ իւր լուսանկարը և մի
դի դիւժինի չափ բաժանել նրանց։

Գիմնազիայում՝ սարուագրութիւն էին բա-
ցել մի ինչ որ բարեգործական նպատակով։
Մարիամը առանց տատանուելու ընծայեց իւր
հարուստ ընկերուհիների չափ, թէև այդ պատ-
ճառով նրա ընտանիքը ստիպուած պէտք է լի-
նէր երեք օր առանց մսեղէն կերակրի մնալ։ Հա-
սաւ ձմեռը։ Մարիամը դէն ձգեց իւր հին, կար-
կատած, տաք կօշիկները և պահանջեց նորերը։
Նա չը համաձայնուեց գլխին ծածկել՝ իսկա-
պէս բաւականին տգեղ, հիւսուած շալը և չը
նայելով սաստիկ ցրտերին, ականջները բաց էր
ման գալիս, մինչև որ մացը երկիւղ կրկով՝
թէ մի՛ գուցէ աղջիկը մրսէ, ծախեց իւր միակ
թանկագին, մետաքսեայ վերնազգեսալ և գնեց
Մարիամի ցանկացած փաթաթանը։

Եղիսաբէթը չէր յանդիմանում աղջկան,
բայց յաճախ տխուր դէմքով նայում էր նրան
և մի քանի անդամ ասում ամուսնուն. — Թմնդ
է նստում մեզ Մարիամի ուսումը։ Առաջ էլ
գժուարութեամբ էինք կառավարւում, իսկ այժմ
աւելի ևս դժուար է։ Այն բան նրա համար

ենք անում, բայց չէ որ մեր միւս փոքրիկներն էլ մեծանում են. ինչու պէտք է նրանց զրկել: — Ե՞ն, համբերենք մի փոքր, ոչինչ, — ընդհատում էր նրան Յովհաննէսը. — Մարիամը բոլորիս կը վարձատրէ՝ թէ մեզ և թէ փոքրերին: — Արգեօք դեռ երկար պիտի սպասենք, և վերջապէս կը հասնենք երբ և իցէ այդ բանին, — հառաջում էր Եղիսաբէթը:

— Ի հարկէ, կ'արժանանանք, — հաւատացնում էր Յովհաննէսը, — Մարիամը դեռ երեխայէ, շատ անդամ նա չէ հասկանում մեր կարիքը, բայց տեսնում է, որ մենք ոչինչ չենք խնայում, դրա համար և իւր ժամանակին նա ևս ոչինչ չի խնայի մեզ համար:

Ծննդեան տօները մօտենում էին: Մի անգամ Յովհաննէսը տուն եկաւ առանձին ուրախ արամազրութեամբ:

— Ուրախացիր, սիրելիս, — ասաց նա ճաշից յետոյ, նստելով Եղիսաբէթի կողքին, — տօներին ինձ 50 ր. պարզե կը տան:

— Միթէ, Աստուած իմ, այ բաղդաւորութիւն, — բացազանչեց Եղիսաբէթը, և մինչեանգամ ուրախութիւնից կարմէից:

— Մեր զրութիւնը գոնէ մի փոքր կ'ուղղուի. խանութի պարտքը կը տանք, երկու սամէն լաւ փայտ կը դնենք, ապա թէ ոչ մեր այժմեան էժա-

նազին և թաց փացտը ամենեին չէ տաքացնում մեր բնակարանը. գրաւ դրած զգեստը կը թափենք, սանամօր պարտքը կը վճարենք...

— Տես, որքան բան ասացիր, ծիծաղելով լնդհատեց նրան Յովհաննէսը. — քո հաշուով հարիւր բուրլին էլ չի բաւականանաց: Զէ, դիտես ինչ. ես քեզ կը տամ քառասուն բուրլի, դրա մի մասը գործ դիր պարտքերը վճարելու համար, իսկ մնացածով գնիր տան համար կարեւոր իրերը, իսկ 10-ը բուրլին մօտա կը պահեմ: Դու զիտես որ Ծննդեան տօնը մանկական տօնէ, չէ որ մի կերպ պէտք է ուրախացնենք մեր երեխաներին. գոնէ մի-մի չնչին իր կը գնեմ բոլորի համար:

— Ասենք դա երես աալ է նշանակում, — պատասխանեց Եղիսաբէթը. բայց նրա դէմքից երկում էր որ նա անկեղծ չէ խօսում, որ ինքը շատ և շատ ուրախ կը լինէր, եթէ երեխաներին մի կերպ ուրախացնէր:

Աւելորդ յիսուն բուրլու ստանալը մի նշանաւոր դէմքը էր Սմիրնովների լնտանիքի համար: Եղիսաբէթը կազմեց մի երկար ցուցակ այն բոլոր անհրաժեշտ իրերի համար, որնք պիտի առնուէին և սկսեց հաշուել՝ արգեօք 40 ր. կը բաւականանամց թէ ոչ: Բանից երե-

ւաց, որ այդ փողով չի գնուի օամենաանհրաժեշտ իրերից կէսն անգամ: Պէտք էր շատ բան կրծատել և շատ բանից հրաժարուել: Եղիսաբէթը երկար մտածում էր, հաշուում էր՝ թէ մատների վրայ և թէ զրում մատիտով, և վերջապէս գոհ մնաց. բոլոր անցետաձելի պարուքերը կարելի էր վճարել. մնացած փողը կը բաւականանար թէ փայտի, թէ գրաւ զրած զգեստը թափելու և թէ երկու երեք ամենաանհրաժեշտ բաները գնելու համար, և վերջապէս այդ բոլոր ծախսերից յետոյ նա կարող էր, — այդ բարի կնոջ համար այս ամենից հաճելին էր, — երկու-երեք րուբլի խնայել և Յովհաննէսի համար մի ընծայ գնել: Ամուսնուն մի բան ընծայելը շատ մեծ բաւականութիւն էր պատճառում Եղիսաբէթին: Ամուսնութեան առաջին տարիներում, երբ ընտանիքը դեռ բազմամարդ չէր, նա շուտ-շուտ ամուսնուց ծածուկ դանում էր որևէ աշխատանք և վաստակած փողով աօներին մի ընծայ էր գնում Յովհաննէսի համար: Վերջին ժամանակները նա զրկուած էր այդ բաւականութիւնից: Ընտանեկան աշխատանքն այնքան շատ էր, որ նա հագիւ կարողանում էր բոլոր կատարել, և մինչեւ անգամ, եթէ նրան յաջողում էր մի քանի կոպէկ աշխատել, չէր կարող այդ փողը ծախսել իւր ցանկու-

թեան համաձայն, քանի որ լնտանիքն ամենակարեռ բաների մէջ յաճախ կարիք էր զգում: Եւ ահա, վերջապէս, մի անսպասելի բաղդաւորութիւն. կարող է իւր կարգադրութեան ներքոյ ունենալ ամբողջ երեք րուբլի: Նատ զեղեցիկ իրեր կարելի է զնել այդ փողով, պէտք էր միայն մտածել՝ թէ ինչ բան աւելի մեծ բաւականութիւն կը պատճառէ Յովհաննէսին: Եղիսաբէթը երկար մտածեց. բայց այս բոլորը զեղեցիկ մաքեր էին, որոնք նրա գունաա շըրթունքների վրայ յաճախ ժպիտ էին յարուցանում, իսկ նրա անխոնջ ձեռքերն առաջուանից աւելի արագ էին կատարում լնտանեկան անվերջ գործերը: Յովհաննէսը նոյնպէս յաճախ ժպառում էր, երազելով 50 ր. պարգեի մասին: Երնիսացոց ընծաների համար յատկացրած գումարը շատ չնչին էր, բայց չէ որ երեխաներն էլ փոքր էին և, որ գլխաւորն է, պճնասէր չէին: Յովհաննէսն առաջուց հրճւում էր՝ երևակայելով, թէ ինչպիսի ուրախութեամբ կը փայլին փոքրիկների աչերը, երբ նա ցոյց կը տայ նրանց անսպասելի ընծաները:

Ամենաթանկագին ընծան նա յատկացրեց, ի հարփէ, Մարիամին, ինչպէս մեծին. և շատ անգամ նա ուշանում էր ճաշին, որովհետեւ անց ու դարձ էր անում խանութների առաջով մտա-

ծելով՝ թէ պատուհաններում դարսած և կահիսած իրերից ո՞րն աւելի կը հաւանի 13 տարեկան Մարիամը:

Երեխանները մի կերպ տեղեկութիւն ստացան իրենց հօր սպասուած 50 ր. մասին, և յուզուեցան:

— Հայրիկը հարստացել է, — սենեակի հեռաւոր անկիւնում, յատակի վրայ նստած, փսփռում էին երեխանները. — երեխ նա մեզ համար շատ խաղալիքներ կը գնէ:

Երեք եղբայրներից մեծը, Բարսեղը, օրական մի քանի անգամ զբօննելու թոյլուութիւն էր խնդրում մօրից և շարունակ գնում կանգնում էր խաղալիքների խանութի պատուհանների մօտ, որպէսզի ընարէ իւր սրտի ուզածը: Վերջապէս նրա ցանկութիւնը կենդրոնացաւ մի ինչ որ թղթէ մեծ արկղի վրայ, որի մէջ դարսած էին բազմաթիւ գունաւոր զինուորներ, մի քանի թնդանոթ և մօտ տասլ հատ գեղեցիկ վրաններ: Այդ բոլորը թղթից էր պատրաստուած, բայց գեղեցիկ կերպով նկարուած, և ամեն մի կորի տակ կպած էր մի փոքրիկ տախտակ, որպէսզի նրանք կարողանան կանգնել սեղանի վրայ: Բարսեղը հիացմամբ նկարագրեց եղբայրներին այդ հրաշալի խաղալիքը և

ամբողջ երկու օր միայն դրա մասին էր մտածում: «Իսկ եթէ յանկարծ ուղիղ չը լինի, որ հայրիկը հարստացել է, — յուզուելով ասում էր նա երբեմն. — յանկարծ անցեալ տարուաց պէս, այս տարի էլ ոչինչ չ'ընծայի մեզ, իսկ եթէ ընծայի էլ, վայ թէ մի ուրիշ բան անց:

Վերջապէս, տղան չը համբերեց և ստատիկ բարախող սրտով յացոնեց հօրը իւր յոցերն ու կասկածը:

Յովհաննէսը ծիծաղեց:

— Դէ, մի փոքր համբերիր, հոգիս, — ասաց նա, փաղաքշելով տղային. — շուտով Ծննդեան տօները գալու են, այն ժամանակ մենք այդ զինուորներին իրենց վրաններով ու թնդանօթներով գերի կը վերցնենք:

— Հայրիկ, դու ինձ էլ մի բան կ'ընծայես. ինձ էլ, — աղաղակում էին միւս փոքրիկները, քաշքշելով հօրը:

— Անհնգ եղեք, ոչ մէկիդ էլ չեմ մոռանալ, ուրախ պատասխանում էր Յովհաննէսը: — Թողէք տօները գան, բոլորիդ էլ կ'ուրախանեմ:

Եւ երեխաններն առաջուց ուրախանում էին, երազելով ապագայի մասին:

Միայն Մարիամը չէր մասնակցում լնտանեկան այդ ընդհանուր ուրախութեանը, թէև

զիտէր դրա պատճառը: Ընդհակառակը, որքան
տօները մօտենում էին, նա աւելի տրամում էր:

Վերջապէս մի անդամ՝ (այդ հէնց այն օրն
էր, երբ Յովհաննէսը բերեց տուն իրեն պար-
գևած փողը և երբ այդ պատճառով նա առանձ-
նապէս ուրախ էր) նա ճաշի եկաւ այնպէս
կարմրած և արտասուած աչքերով, որ հայրն
ու մայրը միաձայն բայցանչեցին.

—Մարիսամիկ, ի՞նչ է պատահել:

—Ոչինչ, —տխուր ձախով արտասանեց աղ-
ջիկը, և ճաշի ժամանակ էլ ոչ մի խօսք չ'արտա-
սանեց: Երեկոյեան Յովհաննէսն ու Եղիսաբէթը
գարձեալ սկսեցին հարց ու փորձ անել: Սկզբ-
րում Մարիամը յամառութեամբ լռում էր, բայց
վերջապէս նա լալով բացագանչեց.

—Ո՛հ, ի՞նչ դժբաղդ եմ ես:

—Ի՞նչ է պատահել, ի՞նչ դժբաղդութիւն,
վրդովուած հարցրեց հայրը:

—Պատմիր մեզ ցաւդ, —հանգստացնում էր
մայրը, —գուցէ մենք հնար կը գտնենք ցաւդ
դարմանելու:

—Ո՛չ, չէք կարող օգնել, ես զիտեմ արդէն,
որ չէք կարող, —արտասուելով ասում էր Մա-
րիամը:

—Պատմի՛ր:

—Դէ, լսեցէք. Սիրանոյշը, որ իմ ամենալաւ

ընկերուհին է, Ծննդեան նախընթաց գիշերը,
տօնածառ և մանկական պարահանդէս կ'ունե-
նայ. նա հրաւիրեց մեր գիմնազիականերից շա-
տերին և բոլորն էլ կ'երթան, միայն ես չեմ
կարող գնալ. իսկ այնաեղ ինչպէս լաւ, ինչպէս
ուրախ կը լինի:

—Ինչու գու չես կարող գնալ, Մարիամիկ,—
նկատեց Եղիսաբէթը: —Հազնելու ոչինչ չունիս.
չէ որ հայրդ քեզ համար տօներին ընծայ է
պատրաստում: Խնդրիր, որ նա գնէ 15 արշինի
չափ բարէժ, —ես կը կարեմ քեզ համար մի
շատ սիրուն գգեսա:

—Ո՛չ, մայրիկ, շնորհակալ եմ, աւելի լաւ է
չը գնամ, քան թէ այնպէս գնամ, որ ամենքն
ինձ մատով ցոյց տան: Միւս բոլոր աղջիկները
կը լինին իսկական պարահանդիսի շորերով ծա-
ղիկները զլիներին, իսկ ես պէտք է գնամ մի
հասարակ բարէժէ զգեստով, այն էլ նախաջըր-
հեղեղեան ձեռվ կարուած: Ո՛չ, հարկաւոր չէ,
թող ուրիշները զուարձանան՝ ես դժբաղդս,
ինչպէս կարող եմ նրանց հաւասարուել: Մա-
րիամը գլուխը զրեց սեղանի վրայ և նորից
սկսեց լսլ:

—Ի հարկէ, գու չես կարող հարուստներին
հաւասարուել, —նկատեց Եղիսաբէթը և հե-
ռացաւ աղջկանից կիսատրամած նրա վշտով,

կիսաբարկացած նրա փոքրոգութեամբ: Յովհաննէսը նոյնպէս ուզում էր հետանալ, բայց չը կարողացաւ: Մարիամի ողբալը շատ տխուր արձագանք էր գտնում նրա զգայուն սրտում:

«Դեռ երեխայ է, ի հարկէ. ուզում է զուարձանալ, և ծանր է երբ մարդ իրեն միշտ ուրիշներից ստոր է զգում», — մտածում էր Յովհաննէսը: Նա նստեց աղջկայ կողքին և աշխատում էր քնիուշ փաղաքշանքներով համդստացնել նրան: Բայց նրան չը յաջողուեց այդ:

— Հայրիկ, բայցազանչեց Մարիամը, — ինչու էք ասում, թէ խղճում էք ինձ, թէ ինձ համար պատրաստ էք ամեն ինչ անել. չէ՞ որ դուք կարող էք այդ բաւականութիւնը տալ ինձ, բայց չէք անում:

— Ես ինչպէս կարող եմ այդ անել, Մարիամիկ:

— Ես պարզ է. չ՞ որ դուք ասում էիք, որ Ծննդեան տօներին 50 ր. պարզէ պիտի ստանաք:

— Այդ այդպէս է, հոգիս, բայց այդ փողերը նախապէս յատկացրած են ուրիշ իրերի համար:

— Այն, գիտեմ, մայրիկն ուզում է գնել բարդի փայտ, թէլի համար թասեր, և մի քանի այդ տեսակ իրեր, իսկ դուք պատրաստում

էք լնծայել եղբայրներիս մի քանի չնչին բաներ. ի հարկէ ինձ համար դուք փող չէք ունենալ:

— Դեռ մէկ լսիր, Մարիամիկ....

— Հայրիկ, ինչու ես ինձ համոզում, ես հօձեզանից ոչինչ չեմ խնդրում: Ես մինչև անգամ չէի ուզում պատմել, թէ ինչի՞ համար եմ լայիս. դուք ինքներդ ուժով ինձնից իմացաք: Ես ձեզանից ոչինչ չեմ ուզում... միայն դարձեալ կ'ասեմ, որ ես շատ և շատ դժբաղդ եմ:

Յովհաննէսն ընկղմուեց մտածմունքների մէջ. Նա ինքն իրեն մտածում էր, թէ արդեօք որքան կ'արժենայ փոքրիկ աղջկայ պարահանդիսի զգեստը և թէ գնելու որ իրերից կարելի է հրաժարուել՝ Մարիամի օգտին: Թէև Մարիամը ասաց, որ չի ուզում իւր ցաւը յացանել ծնողներին, բայց իսկապէս նա անդադար իւր ցաւի մասին էր խօսում հօր և նամանաւանդ մօր հետ:

«Չէ որ բոլորը մէկ է, — ասում էր նա մօրը — այն փողը, որ վերցրել է հայրիկը, պիտի գտարկ բաների վրայ ծախսուի. եղբայրներիս համար պէտք է գնէ փայտից շինուած ձիաներ և զինուորներ, իսկ ես ինչպէս կ'ուզենայի լինել Պետրօվացի մօտ: Մեր բոլոր աղջիկներն արդէն մի քանի անգամ եղել են պարահանդէսներում, իսկ ես մինչև անգամ չը գիտեմ» թէ ի՞նչ է պարահանդէսը: Եթէ հայրիկն ինձ լնծայեր իւր

10 լուրին, և դուք էլ մի երկու-երեք լուրին,
գուցէ բաւականանար ինձ»:

Եւ ահա Մարիամի ցանկութիւնը կատա-
րուեց: Եղիսաբէթը իրեն զապելով, գնաց աղ-
ջկայ հետ խանութները շրջելու և պարահան-
դիսի. համար հարկաւոր իրերը գնելու. բաց
բանից երևաց, որ Մարիամի պահանջած 13 ը.
առևնելին բաւական չէ. միայն զգեստն արժէր
13 ը., բացի զբանից հարկաւոր էր լայն մե-
տաքսէ ժապաւէն, ձեռնոցներ, նոր կիսակօշիկ-
ներ և մազերը պէտք է յարդարել տար վարսա-
վիրայի մօտ: Մարիամն անսովոր ուրախու-
թեամբ պատրաստում էր ապագայ բաւակա-
նութեան համար. նա ուրախ էր, ինչպէս մի
թուշիկ, և զիտակյաբար աշխատում էր չը
նկատել հօր այն տիսուր հայեացքները, որ նա
մի-մի անդամ ձգում էր աղջկայ վրայ, և մօր
դժգոհութիւնը, երբ նա ճարահատեալ իւր զան-
ձարանից հանում էր և տալիս նրան շարունակ
մի-մի րուբլի: Յովհաննէսի ստացած փողի կի-
սից աւելին գործ զրուեց Մարիամի պահանջ-
ների համար. Թուցածով պարսպերը վճարեցին
և փայտ գնեցին. իսկ երեսաների ընծաների
և այն բաւականութեան մասին, որ պիտի ստա-
նային, հայրն ու մայրը այլ ևս չէին կարող
մտածել:

Հասաւ Ծննդեան նախլնթաց գիշերը: Ժա-
մի 8-ին, Սմիրնօվների տան առաջ կանգնեց մի
կառք. Մարիամի լնկերուհիներից մէկը եկաւ
Մարիամին հետը տանելու: Մարիամը, որ ամ-
բողջ մի ժամ կանգնած էր հայելու առաջ,
կարգի բերելով իւր զգեատը և ինքն իրեն զմայ-
լելով, շտապով ցտեսութիւն ասաց Ճնողնե-
րին և վագեց կառք նստեց: Հայրն ու մայրը
կանգնած էին լուսամուտի մօտ և ուղեկցեցին
նրան իրենց հայեացքով: Եղբայրներն էլ հաւա-
քուել էին այսուղ և հետաքրքրութեամբ նա-
յում էին թէ հեռացող քրոջը և թէ դիմացի
տան պայծառ լուսաւորուած պատուհաններին:

—Հայրիկ, —բացագանչեց վեց տարեկան Մի-
շան, —նայիր, գիմացի տանն արդէն տօնածառի
մոմերը վառեցին, դու երբ պիտի ընծայես մեզ
խաղալիքները. չէ որ այժմ արդէն ժամանակ է:

—Ես արդէն զինուորների համար սեղանի
վրայ տեղ եմ պատրաստել, —ասաց Բարսեղը՝
պահանջող հայեացքով նայելով հօրը:

Եղիսաբէթի համար շատ ծանր էր, որ նա
խարեց երեխաների յոյսերը և չը կարողացա-
ուրախութիւն պատճառել դրանց:

—Սիրելիներս, —ուժով արտասանեց Յովհան-
նէսը, —ձեզ համար խաղալիքներ չունիմ, համ-
բերեցէք, երբ և իցէ ես ձեզ էլ կուրախա-

ցնեմ; —Եւ նա միւս կողմի գարձրեց իւր դէմքը,
որպէսզի չը տեսնի այն տխուր և անսպասելի
հայեացքները, որով նրանք լսեցին այդ խօսքե-
րը և այն արցունքները, որ պիտի թափուէին
անմեղների աշերից:

—Այն, չէնք կարծում, թէ այս տարի այս-
պէս կը հանդիպենք տօներին, —ախ քաշելով ար-
տասանեց Եղիսաբէթը. —բայց զրա փոխարէն-
մեր աղջիկ պարոնը կառքով գնաց:

—Մի բարկանար նրա վրաց, —հեզօրէն նկա-
տեց Յովհաննէսը. —չէ որ նա զեռ երիխաց է,
ինքն էլ չի հասկանում, թէ ինչ է անում.
Երբ կը մեծանայ, այդ բոլորի համար փոխարէնը
կը փարձատրէ:

—Ե՞հ, բաւական է, խնդրեմ, այսպիսի բա-
ներ մի' ասիր ինձ, —բարձրաձայն պատասխանեց
Եղիսաբէթը. —եթէ նա այժմ ոչ մի ցանկո-
թիւն չունի իւր փոքրիկ եղբայրներին միսի-
թարելու, կամ մեզ՝ ծնողներիս աղառելու աւե-
լորդ հոգսերից, համնզուած եղիր, որ երբ մե-
ծանայ, աւելի վատ կը լինի: Այժմ նա իրեն
նման աղջիների մօտ ամաչում է խոստովա-
նուել, որ իւր հայրը չքաւոր է. հաւատան ինձ,
երբ մեծանայ, չի էլ կամենայ աղքատ մարդուն
իւր հայրը համարել:

Յովհաննէսը զլուխը քաշ զցեց: «Աստուած

իմ, միթէ ճիշդ է այդ, —կամաց արտասանեց
նա, —բայց ես ի՞նչպէս սիրում եմ նրան: և
ինքն էլ չը նկատեց, թէ ինչպէս երկու կաթիլ
արտասուզ հանդարտ գլորուեցին իւր այսերից:

Եւ այսպէս ուրեմն, Մարիստը ներկայ էր
իւր ընկերուհու պարահանդիսին և հագած ու-
նէր իսկական պարահանդիսի զգեստ. ամբողջ
ընտանիքից նա միայն դիմաւորեց տօներին՝ ու-
րախութեամբ շրջապատուած: Բայց արդեօք
ինքն ուրամիս էր...

11
a latitudine quatuor sexaginta milium et
deinde ad orientem de latitudine australis et
meridiem usque ad longitudinem ac 30 gradus
longitudo usque ad meridiem usque ad longitudinem

et australis usque ad longitudinem
australis et meridiem usque ad longitudinem

16306-16313

20 φ

ՀՀ Ազգային գրադարան



NL1333894 1

ՀՀ Ազգային գրադարան



NL1333893 4

84

